

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/9

26 հունվարի 2016 թ.

Քննարկվեց քաղաքացի Ռոզա Ալոյանի 22.12.2015թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 16.12.2015թ-ի թիվ 299572/05 որոշման դեմ:

#### **Քաղաքացի Ռոզա Ալոյանի գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 03.12.2015թ-ին կայացվել է հարկային պարտավորությունների գծով գումարի գանձման վերաբերյալ որոշում, որի հիման վրա 16.12.2015թ-ին կայացվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 299572/05 որոշումը:

Եկամտային հարկի գծով պարտավորությունների մասով կատարվել է վերահաշվարկ, որի արդյունքում 22.12.2015թ-ի դրությամբ քաղաքացի Ռոզա Ալոյանը հարկային պարտավորությունները դադարել են:

Ռոզա Ալոյանը հայտնում է նաև, որ պետական գրանցման պահից գործունեություն չի իրականացրել և 10.09.2014 թ-ին լուծարել է պետական գրանցման վկայականը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ռոզա Ալոյանը խնդրում է վերանայել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 16.12.2015թ-ի թիվ 299572/05 որոշումը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով քաղաքացի Ռոզա Ալոյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 03.12.2015թ-ի դրությամբ եկամտային հարկի գծով նրա չկատարած հարկային պարտավորությունները կազմում են 61.896 դրամ:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 03.12.2015 թ-ին ընդունվել է թիվ 277/05 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ռոզա Ալոյանից 61.896 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Վերոգրյալ հանգամանքը հիմք է հանդիսացել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 16.12.2015թ-ի թիվ 299572/05 որոշումը կայացվելու համար: Մասնավորապես, ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով 16.12.2015թ-ի թիվ 1074 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ քաղաքացի Ռոզա Ալոյանը սահմանված ժամկետում ՀՀ պետական բյուջե չի վճարել հարկերը: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների

վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3 հոդվածով, ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 16.12.2015թ-ին կայացվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 299572/05 որոշումը, Ռոզա Ալոյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու, այն է՝ 20.000 դրամի չափով տուգանք կիրառելու մասին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ռոզա Ալոյանը, ստանալով պարտավորությունների գանձման վերաբերյալ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 03.12.2015 թ-ին ընդունված է թիվ 277/05 որոշումը, այցելել է ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ և քննարկվող հարցի կապակցությամբ ներկայացրել համապատասխան ապացույցներ: Վերջիններիս հիման վրա ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ կողմից կատարվել է Ռոզա Ալոյանի անձնական հաշվի քարտում առկա պարտավորությունների վերահաշվարկ, որի արդյունքում Որոշման մեջ նշված եկամտային հարկի գծով պարտավորությունը դադարել է:

Քննարկվող դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 16.12.2015թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 299572/05 որոշմամբ հարկերը սահմանված ժամկետում ՀՀ պետական բյուջե չվճարելու համար Ռոզա Ալոյանը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3 հոդվածի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության, այն դեպքում, երբ նշված որոշումը կայացվելու օրվա դրությամբ, ըստ «Հարկատու 3» համակարգում առկա տվյալների, Ռոզա Ալոյանը որևէ հարկատեսակի գծով պարտավորություն չի ունեցել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 16.12.2015թ-ի թիվ 299572/05 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ